ԱՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

961 թուականին Հայոց, Վրաց, Աղուանքի շահնշահ Բագրատունի Աշոտ Գ. Ողորմածը (953-977) Կարսի բերդից փոխադրուել Անի՝ յայտարարելով այն Հայաստանի մայրաքաղաք։

961-1045 թուականներին Անին եղել է Բագրատունիների թագաւորութեան մայրաքաղաք։ 1045 թուականին Հայոց Գագիկ Բ. թագաւորին խաբէութեամբ Կոստանդնուպոլիս հրաւիրելու եւ փաստացի կալանաւորելու հետեւանքն այն է եղել, որ կորսուել է Հայոց պետականութիւնը։ Մի քանի տասնամեակ Անին բռնակալելուց յետոյ բիւզանդական կայազօրը պարտուել ու քաղաքը թողել է սելջուկներին։

Մէկուկէս դար սելջուկեան բռնակալութեանը ենթարկուելուց յետոյ, 1199 թուականին, Հայաստան-Հայքի շահնշահ Զաքարէ Բ. Զաքարեանը (1187-1213) սելջուկներից ազատագրել է Անին եւ հռչակել իր հիմնած թագաւորութեան մայրաքաղաք։ Այդ կարգավիճակը Անին պահպանել է մինչեւ 1236 թուականը, երբ մոնղոլների կողմից գրաւուել ու աւերուել է։ Մոնղոլների տիրապետութեան օրօք (1236-1350ական թուականներ) այն մասամբ վերականգնուել ու եղել է շահնշահ Զաքարէ Բ.-ի ժառանգների աթոռանիստը։

Հայաստանի երկու անկախ պետականութիւնների՝ Բագրատունիների եւ Զաքարեանների գերագոյն խնդիրը եղել է Հայաստանի անկախութեան, մայրաքաղաք Անիի անվտանգութեան ապահովումը։

ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱՁԵՒՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

Ռազմավարական առումով մայրաքաղաք Անիի պաշտպանութեան հիմնախնդիրը Բագրատունիների թագաւորութեան օրօք՝

885[1]-1041 թուականներին, Աշոտ Ա.-ի (885-890), Սմբատ Ա.-ի (890-914), Աշոտ Բ. Երկաթի (914-928), Աբաս Ա.-ի (928-953), Աշոտ Գ. Ողորմածի (953-977)[2], Սմբատ Բ. Տիեզերակալի (977-990), Գագիկ Ա.-ի (990-1020), Յովհաննէս-Սմբատի (1020-1041)[3] օրօք, իրականացուել է Կովկասեան լեռներից հարաւ ընկած տարածաշրջանի եւ Հայկական բարձրաւանդակի պաշտպանութեան սկզբունքով։ Բագրատունիները շարունակել են պահպանել արաբական խալիֆայութեան Արմենիա կուսակալութեան կուսակալի (855-885) իրենց ունեցած կարգավիճակը, փաստօրէն լինելով Հայաստանի թագաւոր, գերագահութիւն են ունեցել նաեւ Վիրքի, Աղուանքի, ինչպէս նաեւ իրենց հպատակութիւն յայտնած արաբական ամիրայութիւնների նկատմամբ։ Սա նրանց պարտադրել է տարածաշրջանում աշխարհագրական բոլոր կողմերից, այսինքն շրջանաձեւ պաշտպանական համակարգ կառուցել ամբողջ տարածաշջանի ընդգրկմամբ։ Միայն Հայկական բարձրաւանդակում այդ համակարգի մաս էին կազմում արեւելքում եւ հարաւում Գուգարքի, Արցախի, Սիւնիքի, հարաւում ու արեւմուտքում՝ Վասպուրականի[4], Մոկաց ու Սասունի, արեւմուտքում՝ Բարձր Հայքի, Ծոփքի բերդերը։ Վերոյիշեալից ելնելով Բագրատունիները պաշտպանական համակարգը կազմել մի քանի ամբողջական օղակներով՝ հեռաւոր սահմանների ամենամեծ օղակից սկսած մինչեւ անմիջապէս իրենց Անի մայրաքաղաքի պաշտպանութեան համակարգի ամենափոքր օղակը։

---

1 885 թուականին Աշոտ Ա. Բագրատունին Բիւզանդական կայսրութիւնից եւ Արաբական խալիֆայութիւնից ստացել է արքայական թագ։ Բայց նա իրականում 855–865 թուականներից կրել է իշխանաց իշխան տիտղոսը եւ կառավարել Արմենիա կուսակալութեան իշխանութիւնը։ Երկրի տարածքը Հայոց, Վրաց, Աղուանքի շահնշահ Աշոտ Գ. Ողորմածի օրօք (953-977) կազմել է շուրջ 250.000 քառ. կմ։

2 Ա. ԵՂԻԱԶԱՐԵԱՆ, *Աշոտ Գ. Ողորմած, թագաւոր Հայոց*, ԵՊՀ, Երեւան 2020, 152 էջ։

3 Յովհաննէս Սմբատը կորցրել է Հայոց, Վրաց, Աղուանքի շահնշահ տիտղոսը։ Նրա իշխանութիւնը պարփակուել է Շիրակի գաւառով, շրջականերով։ Նրա օրօք թագաւորութիւնն այլեւս նոյն խնդիրը չի իրականացրել ինչպիսիք իրականացուել են նախորդների օրօք։

4 Վասպուրականի Սենեքերիմ-Յովհաննէս թագաւորը 1021 թուականին Բիւզանդիային է յանձնել Վասպուրականի 8 քաղաք, 72 բերդ, 4 հազար գիւղ եւ գաղթել Սեբաստիա։

Մեր հետազօտութեան սահմանից դուրս թողնելով Վիրքի եւ Աղուանքի կովկասակողմ պաշտպանական կառոյցները, արձանագրենք, որ Բագրատունիներն անմիջապէս Հայաստանի պետութեան սահմանային առաջին օղակը ամրապնդել են արեւելքից արեւմուտք ուղղութեամբ Գուգարքի Գագ[5]*, Աղջկայ բերդ, Գաւարգին, Գարդման, Թանիկ, Մածնաբերդ, Մանթաշ-Կայծոն, Արցախի Գիւլիստան, Բերդաքար, Ջրաբերդ, Հաւքախաղաց, Խոխանաբերդ, Շիկաքար, Աղջկաբերդ, Գոռոզ, Խցաբերդ, Ցոր*[6]*, Սիւնիքի Անդոկաբերդ, Բարկուշատ, Պահու, Քաշունի, Քարօտան*[7]*, Բերդիկ, Կկուաքար, Բղենոյ, Կարճաւան, Կաքաւաբերդ, Գիլաբերդ, Բաղաբերդ, Շլորուտ, Եզնաքար, Որձաբերդ, Որոտան, Ցուրաբերդ, Խոժոռաբերդ, Զագեճոր, Հալիճոր, Հայրաբերդ*[8]*, Գողթնի Գիրան, Որդուարի, Շահկերտ, Ազնգբերդ, Շահապոնք, Ջուղա, Երնջակ, Ճահուկ, Նախիջեւան, Արբայ*[9]*, Կոգովիտի Արտագերս (Կապոյտ բերդ), Դարոյնք, Արշարունիքի Սուրբ Մարի, Ջաւախքի Ախալքալակ, Խիռտուիս, Թմբկաբերդ*[10]*, Ախալցխա, Ածղոր*[11] *հզօր բերդերի համակարգով։ Պաշտպանութեան համակարգի մաս են կազմել նաեւ Վիրքի հետ սահմանի (չրջանագծի տրամագծի) Գուգարաց նահանգի Լոռի գաւառի Շամշուլդէ, Լոռեբերդ, Սեղուի, Կայծոն,*

5 Հ. Մ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, *Գագ բերդ*, «Պատմաբանասիրական հանդէս» 1963, թիւ 4, էջ 39-42: Նոյն, *Հայաստանի բերդերը*, Ս. Ղազար, Վենետիկ 1970, էջ 1016:

6 Շ. ՄԿՐՏՉԵԱՆ, *Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական յուշարձանները*, Պատմական յուշարձանների պահպանման Հայկական ընկերութիւն, «Հայաստան» հրտ., Երեւան 1980, էջ 216:

7 Անդոկաբերդ, Բարկուշատ, Պահու, Քաշունի, բերդերի, Քարօտան ամրոցի մասին տե՛ս Զ. ԸՌՔՈՅԵԱՆ, *Հայոց Քաշաթաղը, Աղահեճք-Քաշաթաղ գաւառի պատմամշակութային յուշարձաններ*, «Սուրբ Էջմիածին» 2022, էջ 221-223, 227-229, 232-233, 234-235, 241-244:

8 Թ. ՅԱԿՈԲԵԱՆ, *Սիւնիքի թագաւորութիւնը, պատմա-աշխարհագրական առումով*, «Միտք» հրտ., Երեւան 1966, էջ 220:

9 Ա. ԱՅՎԱԶԵԱՆ, *Նախիջեւանի պատմա-ճարտարապետական յուշարձանները*, Պատմական յուշարձանների պահպանման Հայկական ընկերութիւն, «Հայաստան» հրտ., Երեւան 1978, էջ 136: Նոյն, *Նախիջեւան. Բնաշխարհիկ պատկերազարդ հանրագիտակ*, «Հուշարձան» հրտ., Երեւան 1995, էջ 368:

10 S. KARAPETIAN, *Javakhk. Scientific research series of Armenian architecture (RAA) foundation*, book 9, Yerevan 2011, էջ 54-57, 192-195, 232:

11 Ս. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, *Ախալցխա (Սամցխէ նահանգ)*, Հայկական ճարտարապետութեան ուսումնասիրող կազմակերպութեան (RAA) գիտական խորհուրդ, Երեւան 2008, էջ 173-174, 187:

Պղնձահանք, Զախալաբերդ, Խոժոռնի, Բերդաւան[12]*, Տաշիր-Զորագետ գաւառի Կայան*[13]*, Ուտիքի Տաւուշ բերդերը, եթէ յանկարծ Վիրքի կողմից լինէր յարձակումը։*

Արտաքին այս օղակին յաջորդել են ներքին նուազագոյնը երկու օղակ։

Դրանցից առաջինում կարեւոր դերակատարութիւն են ունեցել Վայոց Ձոր գաւառի Սմբատաբերդ, Բոլորաբերդ, Հրաչկաբերդ, Այրարատի Ուրծի, Տափի, Դուինի, Երեւանի, Բջնիի, Գառնիի, Շիրակի Հառիճի բերդ-ամրոցները։

Երրորդ օղակը պայմանականօրէն կազմել են անմիջապէս մայրաքաղաքը պաշտպանող համակարգի բերդերը՝ Հիւսիս-արեւմուտքից Կարսը, Երազգաւորսը, Տիգնիսը, հարաւ-արեւելքից Մաղասաբերդը, Բագարանը, Դաշտադէմը, Անբերդը, միւսները։

ԶԱՔԱՐԵԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԻՍԱՇՐՋԱՆԱՁԵՒՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

Զաքարեանների օրօք երկրի եւ մայրաքաղաքի պաշտպանութիւնը բացարձակ այլ սկզբունքի վրայ է կառուցուել։ Պաշտպանութեան միջավայրը ամբողջ չրջանից կիսուել է կիսաչրջանի։ Վիրքի Բագրատունի Թամար թագուհին 1185 թուականին անկախութիւն է չնորհել Հայաստան-Հայքին[14]*։ Լոռէ բերդը աթոռա-*

12 Գ. ՇԱԽԿԵԱՆ, *Լոռի. Պատմութեան քարակերտ էջերը*, Հայկական ՍՍՀ պատմութեան եւ կուլտուրայի յուշարձանների պահպանութեան ընկերութիւն, «Հայաստան», Երեւան 1988, էջ 184:

13 Ռ. ՄԱԹԵՒՈՍԵԱՆ, *Տաշիր-Զորագետ*, ՀՍՍՀ ԳԱ հրտ., Երեւան 1983, էջ 156:

14 Տ. Մ. ՊԵՏՐՈՍԵԱՆՑ, *Կողմնակայութիւն-փոխարժայութիւնների հիմնումը - Զամարեան Հայաստանում*, «Մխիթար Գօշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի «Մխիթար Գօշ» հանդէս, 2017, թիւ 2: Նոյն, *Զամարեանների անկախ պետականութիւնը*, Խաչատուր Աբովեանի անուան ՀՊՄՀ գիտական տեղեկագիր, 2017, թիւ 3-4 (31-32): Նոյն, *Զամարեանների անկախ պետականութեան վերականգնման փիլիսոփայական հիմնաւորումները: 1-ին մաս*, 2020, թիւ 2 (47): *2-րդ մաս*, 2020, թիւ 3 (48): Նոյն, *Ամփոփումը՝ Զամարեանների Պետականաշինութեան Գործառոյթ*, - «Հայկազեան Հայագիտական Հանդէս», 2020, հ. 40: Նոյն, *Զամարեանների անկախ պետականութեան վերականգնման փիլիսոփայական հիմնաւորումները*, «Սիոն», 2020, օգոստոս-դեկտեմբեր: T. PETROSYANTS, *Philosophical Justifications for Restoration of Independent Statehood of Zakaryans*. «Main issues of pedagogy and psychology, Scientific Periodical», 2022, թիւ 2, էջ 115-132: Նոյն, *Զամարէ. Հայոց շահնշահ, թագաւոր, արքայ, կնսար, ինքնակալ, տիեզերակալ (պատմաբաղաքական վէպ)*, Երեւան 2023, էջ 515:

նիստ-մայրաքաղաք դարձրած թագաւոր Սարգիս Բ. Զաքարեանը (1185-1187), իր փոքրիկ երկրի անվտանգութիւնն ապահովելու նպատակով, Թամար թագուհու հետ ձեւաւորել է երկու անկախ պետութիւնների դաշինք եւ ստեղծել վերպետական կառավարութիւն հայ-վրաց մասնակցութեամբ։ Արդիւնքում Կասպից ծովից սկսած Վրաստանի եւ Հայաստան-Հայքի միջեւ ձեւաւորուել է հաստատուն միջպետական սահման Գագ-Զորակերտ-Ջաւախք-Արդահան-Փանասկերտ գծով[15]*։ Անկախ Վիրքն ապահովել է իր հիւսիսային սահմանների պաշտպանութիւնը, անկախ Հայաստան-Հայքն ապահովել է իր հարաւային, արեւմտեան ու արեւելեան սահմանների պաշտպանութիւնը։ Երկու պետութիւնները միասնաբար, համատեղ բանակով, որի հրամանատարը դարձել է Սարգիս Մեծի որդի Զաքարէ Բ.-ը (1189-1213) իրականացրել են - Հայաստան-Հայքի եւ Վիրքի պաշտպանութիւնը։ Բագրատունիների համակովկասեան պատասխանատուութեան փոխարէն Զաքարեանները թիկունքում ապահովել են Վիրքի չէզոքութիւնը եւ ամբողջ շրջանի փոխարէն պարտաւորութիւն են ստանձնել իրականացնել իրենց պետութեան կիսաշրջան օղակի (տրամագծից հարաւ) պաշտպանութիւնը դրանով ապահովելով նաեւ Վիրքի հարաւային ամբողջ սահմանի պաշտպանութիւնը։*

Զաքարեանները գրեթէ ամբողջութեամբ յենակէտային են դարձրել Բագրատունեաց պաշտպանական համակարգի վերը թուարկուած սահմանային եւ ներքին օղակների բերդերը՝ վերակառուցելով, առաւել ամուր դարձնելով դրանք։

ԱՆԻՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ[16]

Աշոտ Ա. Բագրատունին, Հայոց իշխանի կարգավիճակում իրականում, 855-865 թուականներից կառավարել է Արմենիա կու-

15 Խ. ԹՈՐՈՍԵԱՆ, *«Թագաւորների պատմութիւնն ու գովաբանութիւնը» որպէս Զաքարեան Հայաստանի պատմութեան սկզբնաղբիւր*, Երեւան 1968, էջ 325-326:

16 Լէօ, *Անի. Տպաւորութիւններ, յիշատակներ, անցածն ու մնացածը*, ԵՊՀ հրատարակչութիւն, Երեւան 1963, էջ 384: Թ. ՅԱԿՈԲԵԱՆ, *Անիի պատմութիւն, գիրք երկրորդ (1045 թ. մինչեւ անկումն ու ամայացումը)*, ԵՊՀ հրտ., Երեւան 1982, էջ 440: Կ. ՄԱԹԵՒՈՍԵԱՆ, *Անի. Եկեղեցական կեանքը եւ ձեռագրական ժառանգութիւնը*, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին 1997, էջ 412: Կ. ՄԱԹԵՒՈՍԵԱՆ, *Անի-Շիրակի պատմութեան էջեր (յօդուածների ժողովածու)*, Երեւան 2010, էջ 294: Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ, *Շիրակ. Տեղագրութիւն պատկերացոյց*, Ս. Ղազար, Վենետիկ 1881, էջ 192: ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ, *Հայաստան. Անի, պատմ*, Անթիլիաս 1956, էջ 78:

սակալութիւնը եւ աթոռանիստ է ունեցել Բագարան բերդաքաղաքը։ 885 թուականին, բիւզանդական կայսրից եւ արաբական խալիֆայից թագ ստանալով, նա շարունակել է ապրել Բագարանում եւ մինչեւ իր մահը, հինգ տարի Բագարանը եղել է Հայաստանի մայրաքաղաք։ 890 թուականին գահի վրայ նրան փոխարինել է որդին՝ Սմբատ Ա.-ը։ Նոր շահնշահը, ապահովութեան տեսանկիւնից ելնելով, մայրաքաղաքը տեղափոխել է ոչ հեռու գտնուող, բայց աւելի ընդարձակ ու աւելի պաշտպանունակ Շիրակաւան (Երազգաւորս) բնակավայրը։ Իր գահակալութեան տարիները Սմբատ Ա.-ի որդի Աշոտ Բ. Երկաթը մայրաքաղաք է ունեցել նոյն Շիրակաւանը։ Անզաւակ Աշոտ Երկաթին գահի վրայ փոխարինել է եղբայրը՝ Հայոց Սպարապետ Աբաս Բագրատունին։ Եւ քանի որ նրա աթոռանիստը Կարսի բերդն էր, նա այդտեղ էլ մնացել է եւ Կարսը յայտարարել Հայաստանի նոր մայրաքաղաք։

953 թուականին Կարսում է թագադրուել Աբաս Բագրատունու որդի, նոր շահնշահ Աշոտ Գ. Բագրատունին՝ Աշոտ Գ. Ողորմածը։ Մինչ թագադրուելը Աշոտ Գ.-ը Բագրատունեաց իշխանութեան բարձրագոյն իշխանաց իշխանի պաշտօնը զբաղեցնելու եւ թագադրութեանը յաջորդած մի քանի տարիներին ապրելով Կարսում, զգացել է, որ կառավարելու համար՝ երկրի գրեթէ արեւմտեան սահմանին գտնուող մայրաքաղաքն անյարմար տեղում է եւ փաստացի արեւմտեան կողմից գրեթէ անպաշտպան։ Թագադրուելուց յետոյ նա փորձ է արել վերադարձնել Հայաստանի երբեմնի մայրաքաղաք Դուինն ու մայրաքաղաքը տեղափոխել այնտեղ, սակայն Դուինն ազատագրելու փորձն անյաջող աւարտ է ունեցել։ Հայաստանը «թափառող» մայրաքաղաքների փոխարէն պիտի ունենար մնայուն մայրաքաղաք եւ Աշոտ Գ. Ողորմածը հայեացքն ուղղել է Կարսից արեւելք, բնական պաշտպանական առաւել հնարաւորութիւններ ունեցող, տարածաշրջանային առեւտրական ճանապարհների վրայ գտնուող, բազմամարդ, քաղաքատիպ բնակավայր Անիին, որ Կամսարական իշխանից Արշարունիք եւ Շիրակ գաւառների հետ, գնել էր իր նախնին՝ Հայոց իշխան Աշոտ Բագրատունի Մսակերը (790-826) Ը. դարի վերջին կամ Թ. դարի սկզբին։ Անիի միջնաբերդը պարսպի մէջ էին առել դեռեւս Կամսարական իշխանները։ Աշոտ Գ. Ողորմածը իր իշխանութեան ութերորդ տարում բնական եռանկիւնաձեւ, պարսպապատ Անի քաղաքը հռչակել է Հայոց մայրաքաղաք՝ իր պալատը փոխադրելով այնտեղ։

ԱՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԵՆՏՐՈՆ

Քաղաքի պաշտպանութիւնն ապահովելու համար Աշոտ Գ. Ողորմածի հրամանով 963-964 թուականներին միջնաբերդի շուրջ կառուցուել են նոր պարիսպ, որն իր անունով կոչուել է «Աշոտեան»։ Այդ պարիսպը շրջափակել է Միջնաբերդը, բուն քաղաքը՝ «շահաստանը»։ Սակայն Անին չի մնացել Աշոտ Գ. Ողորմածի պարիսպների մէջ։ Արագօրէն ընդարձակուել են թաղամասերը, եւ քաղաքը տարածուել է հարթավայրի կողմը։ Այս նոր քաղաքամասը պաշտպանելու համար Հայաստանի նոր շահնշահը՝ Աշոտ Գ.ի որդի Սմբատ Բ. Տիեզերակալը, 977-990 թուականներին, հին պարսպից բաւականաչափ հեռաւորութեամբ, կառուցել է նոր ու հզօր պարիսպ, որ ժամանակակիցների կողմից կոչուել է «Սմբատեան»։ Նոր պարիսպն սկսուել է Ախուրեան գետից, ձգուել Գայլաձորի ամբողջ երկայնքով, ապա թեքուել դէպի հարաւ, կտրել դաշտավայրի ամբողջ երկարութիւնը՝ հասել Ծաղկոցաձորի բերանը եւ թեքուել դէպի հիւսիս՝ ձորի բերանով իջել ու միացել է Աշոտեան պարսպին, ապա հասել Ախուրեան գետին՝ ընդհանուր ձգուելով շուրջ 2600-2700 մետր։ Այս պարսպի Գայլաձոր-Ծաղկոցաձոր դաշտային հատուածում կառուցուել է կրկնակի պատ՝ մօտ հինգ հարիւր յիսուն մետր երկարութեամբ եւ տաս-տասնհինգ մետր բարձրութեամբ[17]։ Արտաքին կողմից ամբողջ պարսպի երկարութեամբ փորուել է խոր խանդակ, որ լցուել է ջրով։ Ջուրը բերուել է Արջոառիճի լեռնային աղբիւրներից՝ ինքնահոս խողովակաշարով։ Թշնամիները երբեւէ չեն գտել ջրագծերի խողովակաշարերը։ Առկայ է նաեւ բաց առու, որ նոյնպէս եկել է հարթավայրով, ջրով լցրել պաշտպանական խանդակը, ապա Աւագ դռան մօտով հոսել քաղաք, առուակների բաժանուած, տարբեր փողոցներով գնացել մինչեւ Ախուրեան գետը։ Բոլոր պալատները, մեծ ու փոքր հիւրատները, իջեւանատները, քաղաքի տարբեր մասերում գործող տասից աւելի հասարակական բաղնիքներն ապահովուած են եղել ջրով։ Խիտ կառուցապատուած քաղաքի տարբեր մասերում եղել են ջրի բաւական մեծ ամբարներ, ինչպէս նաեւ՝

17 Սա ռազմավարական փառահեղ մտայղացում է։ Եթէ թշնամին գրոհով բացէր բերդադուռը միեւնոյնն է չէր յայտնուի քաղաքում, նրա ճանապարհը փակելու էր դիմացը գտնուող պարիսպը, որ դրսից անտեսանելի էր։ Թշնամին յայտնուելու էր ծուղակ-պարկի մէջ եւ շուրջանակի նետահարութեամբ, առանց սրամարտի գլխովին ոչնչացուելու էր։

գաղտնի ամբարներ։ Քաղաքի բոլոր կողմերում ժայռաքարերի մէջ փորուած են հացահատիկի, այլ պահուստների ամբարներ։ Մօտ հինգ հազար քայլ երկարութեան պարսպի վրայ հաշուել է աւելի քան հարիւր մեծ ու փոքր բուրգ։ Աշտարակները կլոր են, բացի Ծաղկոցաձորի եւ Գայլաձորի աշտարակներից։ Մեծ աշտարակները ներսից երկու-երեք յարկանի են եւ ծառայել են որպէս զօրանոցներ, զինապահեստներ, նաեւ շտեմարաններ։ Աշտարակներն ունեն հրակնատներ ու ատամնաւոր վերջաւորութիւններ։ Անին ունեցել է քառասուն մեծ դուռ՝ իւրաքանչիւրն իր անունով։ Ելումուտը կարգաւորելու, փողոցները մաքուր պահելու նպատակով ծանր բեռներով սայլերը եւ կառքերը քաղաք են մտել առանձին դռներով։ Հարթավայրի կողմում գտնուող Կարսի, Դուինի ու Աւագ դռները ունեցել են երկաթագամ արտաքին երես, որով գրեթէ անխորտակելի են եղել։ Պարիսպների մէջ եղել են նաեւ առաջիններից փոքր մուտքեր, անգամ՝ դռնակներ, որոնք փակուել են քարէ դռներով։ Պարիսպները շարուել են դեղնաւուն տուֆի սրբատաշ քարերով։ Պատերի գունային միապաղաղութիւնը կոտրելու նպատակով, բացի դեղնաւունից, քարգործ վարպետները եւ որմնադիրները օգտագործել են կարմիր ու սեւ քարեր։ Պարիսպները, մուտքերի բուրգերն արտաքինից զարդարուած են խաչերով, արծիւներով, վիշապի եւ ցլի գլուխ պատկերող խորհրդաքանդակներով։ Գլխաւոր մուտքի վրայ պատկերուած է մայրաքաղաքի զինանշանը՝ վազող յովազի բարձրաքանդակ։

Բացի բուն քաղաքից, Անին ունեցել է արուարձաններ, ութ հարիւրից աւելի քարայր-քարանձաւներ, որոնցում եղել են ստորգետնեայ փողոցներ, շուկաներ, կրպակներ, դպրոցներ եւ գերեզմանատներ։

Քաղաքն հիւսիս-արեւմուտքից պաշտպանել է Կարսի բերդը, հիւսիսից՝ Տիգնիս ամրոցը, Երազգաւորսը, հարաւից՝ Մաղասաբերդը, իսկ աւելի հարաւից՝ Արարատեան դաշտի կողմից՝ Անբերդն իր գծային փոքրաչափ բերդ-ամրոցներով։

Անին վարչական, կրօնական, մշակութային կենտրոն է եղել, այստեղ ըստ պատմիչների հազար ու մէկ եկեղեցի է գործել։ Եղել են համալսարան, դպրանոցներ, գրանոցներ։ Քաղաքից դուրս՝ հիւսիսային մատոյցներում, թագաւորների տապանատուն է՝ Հոռոմոսը, հարաւում՝ Տեկորի, արեւմուտքում՝ Խծկոնքի հոգեւոր համալիրները։ Այս հոգեւոր կենտրոնները նոյնպէս հզօր պարիսպներով են շրջապատուած եղել եւ նոյնպէս պաշտպանական խնդիր են իրականացրել։

Անին Ախուրեանի միւս ափի՝ Շիրակի հետ կապուել է կամուրջներով։ Դրանցից առաւել տպաւորիչը Տիգրան Հոնենցի մուտքից իջնող ճանապարհի վրայ կառուցուած կամուրջն է։ Դրա երկու կողմում եղել են մուտքերով աշտարակներ, որոնք երկաթագամ տախտակեայ բացուող-փակուող դռներ են ունեցել։ Այս կամրջի միաթռիչք կամարն աւելի քան երեսուներկու մետր երկարութիւն է ունեցել[18]։

Բագրատունիները, Անին դարձնելով մայրաքաղաք, այդտեղ ապրելու իրաւունք են տուել շատերին։ Դրանով ապահովել են նրա կայուն զարգացումը։ Քաղաքն աճել, մեծացել է, բնակչութեան թիւն անցել է նախ հարիւր, ապա՝ երկու հարիւր հազարից։ Քաղաքի շուկաներում, փողոցներում եղել են մօտ քառասուն արհեստաւորական համքարութիւններ՝ դերձակութեան, ջուլհակութեան, դարբնագործական, զինագործական, բրուտագործական, ոսկեգործական, արծաթագործական, պղնձագործական, ապակեգործական, փայտագործական, թամբագործական, կաշեգործական, գորգագործական, մետաքսագործական եւ այլ։ Անիում եղել են յատուկ փողոցներ, շարքեր, թաղեր, որտեղ կենտրոնացած են եղել արհեստանոց-կուղպակներ՝ բազմոց (ջուլհակների փողոց), սառաճ (թամբագործների) փողոց, կօշկակարնոց, նալբնդնոց, գտակկարոց փողոցներ։

Յայտնի է, որ դարբին Կոնդերի արհեստանոցում են պատրաստուել թագաւորական պալատի նոր ջահերը, կողպէքները, զարդերը, մոմակալները, աշտանակները, սեղանատան դանակները, նաեւ՝ պատերին ամրացուած զէնքերը։ Սեղանատանն օգտագործուող դրոշմազարդ կարասները, ջնարակապատ անօթները, յախճապակէ թասերն ու ապակէ սրուակները նոյնպէս պատրաստել են քաղաքի խեցեգործական եւ ապակեգործական արհեստանոցներում։ Քաղաքի արհեստանոցներում են գործուել պալատի պատերի գորգերը։ Պատուհանների վարագոյրների մետաքսէ կտորը նոյնպէս գործուել է քաղաքում։ Ընկոյզի փայտից պատրաստուած սեղանները, աթոռները եւ դահաւորակներն ամբողջովին պատրաստուել են Անիում։

Անի մայրաքաղաքն ամէն օր ընդունել-ճանապարհել է տաստասնհինգ հազար մարդ։ Օտարականները հիացել են քաղաքի բարեկարգութեամբ, ապշել, որ քաղաքում ստրուկներ չկան, ստրկավաճառութիւն չկայ, ինչն ամէնուր առկայ է եղել արեւելքի մուսուլմանական քաղաքներում։

Այնուամենայնիւ հզօր սահմանային եւ մայրաքաղաքային պաշտպանական համակարգ ունեցող Անի մայրաքաղաքը 1207 թուականի ապրիլի 14ի լուսաբացին, Զատկի օրը, Արդաբիլի սուլթանի տասը հազարանոց բանակի կողմից մէկ օրով գրաւուել է։ Թշնամին Անիի եկեղեցիներում սպանել է տասը հազար մարդ, գերեվարել հազարաւոր հայերի, թալանել եւ անարգել հեռացել Հայաստանի գրեթէ կենտրոնից[19]։ Հայաստան-Հայքի շահնշահ Զաքարէ Բ. Զաքարեանը, որ յարձակման օրը Վիրքի Գախէթ բնակավայր էր գնացել Թամար թագուհու հրաւէրով՝ Զատիկը միասին նշելու, անմիջապէս վերադարձել է եւ ընդամէնը օրեր անց պատժիչ արշաւանք ձեռնարկել Արդաբիլի ուղղութեամբ, գրաւել այն, մզկիթներում այրել տասը հազար մուսուլմանի որպէս արեան վրէժ է՛ւ Անիի սպանուած բնակիչների, է՛ւ եօթ հարիւր տարի առաջ Նախիջեւանում սպանուած հայ իշխանների, եւ աւարառել քաղաքը։

18 Թուրքիայի իշխանութիւններն առաջարկել են հայկական կողմին այս կամուրջը հիմնանորոգել։ Հայկական կողմը պատրաստի նախագծերը փոխանցել է թուրքական կողմին։

ԱՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ա.- ՇԻՐԱԿԱՒԱՆ (ԵՐԱԶԳԱՒՈՐՍ)

Գտնւում է Ախուրեան եւ Կարս գետերի միացման անկիւնում, մասնաւորապէս Ախուրեան գետի աջ ափին, Անի քաղաքից ոչ հեռու։

19 Թշնամին Հայաստան-Հայքի հարաւային սահմանից մտել է երկրի տարածք, շուրջ 350 կիլոմետր առաջացել, հասել մայրաքաղաք Անի։ Յօդուածի հեղինակն իր «Զաքարէ. Հայոց շահնշահ, թագաւոր, արքայ, կեսար, հնքնակալ, տիեզերակալ» վէպում կարծիք է ներկայացրել, որ Արդաբիլի սուլթանի հեծելազօրը Հայաստանի գրեթէ կենտրոն կարող էր հասնել միայն Հայոց թագաւորութեան ու հայ իշխանների դրօշներով ծպտուած։ Այդ նշանակում է, որ Հայաստանի բնակիչները, իշխանական ամրոցների պատասխանատուները բացարձակապէս վստահել են պետական խորհրդանիշներին, որոնցով ծպտուած են եղել թշնամիները։

Դեռեւս Ն. Ք. Գ.-Բ. դարերում այս տարածքում եղել է բնակավայր։ Է. դարի պատմիչ Մեբէոսն իր «Պատմութեան» մէջ Շիրակաւանը յիշատակել է որպէս գիւղ[20]*։*

Բագրատունի առաջին թագաւորների Սմբատ Ա. եւ Աշոտ Երկաթ շահնշահերի օրօք, մօտ 40 տարի, 890-928 թուականներին, Շիրակաւանը թագաւորութեան մայրաքաղաքն էր։ Նրանք ամրացրել են արքայանիստը, հզօրացրել ամրոցի պարիսպները, կառուցել նոր աշտարակներ։ Աբաս շահնշահի (928-953) օրօք թագաւորութեան մայրաքաղաքը Շիրակաւանից տեղափոխուել է Կարս։ Թէեւ Շիրակաւանը դադարել է աթոռանիստ լինել, իր հզօր ամրոցով դարձել է Անի մայրաքաղաքի պաշտպանական կարեւոր յենակէտ։ ԺԱ. դարում, թուրք-սելջուկների արշաւանքի ժամանակ, 1064 թուականին, Շիրակաւանն աւերուել է։ ԺԲ. դարի վերջին՝ քաղաքն ազատագրուել է Զաքարեանների կողմից, վերականգնուել։ ԺԳ. դարի երկրորդ կէսից վերածուել է սովորական գիւղի։

Նիկողայոս Մառի խորհուրդով, Շիրակաւանում պեղումներ է կատարել Արշակ Ասլամազեանը, որի արդիւնքում յայտնաբերուել է հսկայական նիւթ։

1921 թուականին Կարսի մարզը Թուրքիային յանձնուելուց յետոյ, պեղումների արդիւնքում յայտնաբերուած նիւթերը ոչնչացուել, անհետացել են։

Բ.- ԿԱՐՍԻ ԲԵՐԴ

Կառուցուել է Բագրատունիների կառավարման ընթացքում։

Բերդը բաղկացած է երկու մասերից՝ արտաքին եւ ներքին ամրոցներից։ Արտաքին պատերը բաղկացած են հինգ շերտերից։ Արտաքին պատերի հիմնային հատուածում առկայ են խորը խրամատներ (առուափոսեր)։ Բերդի հիմնական մասը գտնուում է արեւելեան հատուածում։ Արտաքին ամրոցի պատերը քառանկիւն տեսք չունեն։ Բերդի ընդհանուր պարագիծը 3 500 մետր է։ Բերդն ունեցել է քսաներկու աշտարակ, որոնցից միայն եօթն են պահպանուել մինչեւ մեր օրերը։

20 ՍԵԲԷՈՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ *Պատմութիւն*, Բաղդատութեամբ ձեռագրաց, հանդերձ առաջաբանիւ, ծանօթագրութեամբբ ի ձեռն Ս. ՄԱԼԽԱՍԵԱՆՑ, Պատմութեան եւ նիւթական կուլտուրայի ինստիտուտ, Արմֆան, Երեւան 1939[4], էջ 30, 74:

Ներքին ամրոցի երկարութիւնը արեւելքից արեւմուտք ուղղութեամբ կազմում է 250 մետր, իսկ հիւսիսից հարաւ՝ 90 մետր։ Բերդն ունի չորս դարպաս։ «Զրի դարպասը» գտնուում է արեւմուտքում, «Կաղզուանի դարպասը» կամ «Կենտրոնական դարպասը»՝ հարաւում, «Բեհրամի դարպասը»՝ արեւելքում, «Գլխաւոր դարպասը»՝ հիւսիսում, որտեղից սկսւում է ճանապարհը դէպի քաղաք։

Բերդի աշտարակներին կարելի է հասնել բարձրանալով հարթ ճանապարհով։ Բերդի տարածքում առկայ են նաեւ ռազմական կացարաններ, զինամթերքի պահեստ։

Այսօր բերդը գրանցուած է Թուրքիայի մշակոյթի եւ զբօսաշրջութեան նախարարութեան հաշուեկշռում։

Գ.- ՏԻԳՆԻՍ

Բերդ Մեծ Հայքի Այրարատ նահանգի Շիրակ գաւառում[21]*, Շիրակաւանից երեք հազարամետր հեռաւորութեամբ, Ախուրեան գետի վտակ Տիգնիս գետակի հարաւ-արեւելեան կողմում գտնուող բաձրութեան վրայ։*

Թ. դարում վերակառուցուել է Շիրակաւան մայրաքաղաքի պաշտպանութիւնն ապահովելու համար։ Մայրաքաղաքը Անի տեղափոխելուց յետոյ դարձել է Անիի պաշտպանական համակարգի մաս։

Ամենայն հաւանականութեամբ գոյութիւն է ունեցել Երուանդունի արքայատան ժամանակներից։ Բագրատունիների կողմից, Հայաստանի անկախութիւնը նուաճելուն զուգընթաց, տեղադիրքով, ռազմավարական, պաշտպանունակութեան հնարաւորութիւնները լաւագոյնս օգտագործուել են։

Բերդի տարածքը գտնուում է Տիգնիս գետակի եռանյիւնաձեւ հատուածում, հիւսիսային եւ արեւմտեան կողմերից բացարձակ անմատչելի է, այդ կողմերից բացառուել է թշնամական գրոհ։ Համեմատաբար մատչելի կողմերում կառուցուել են հզօր, բարձր պարիսպներ՝ ութ կիսակլոր աշտարակներով[22]*։ Բերդատարածքի ներսում եղել է եռայարկ, քառանկիւն յատակագծով պարսպապատ*

21 Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ, *Շիրակ*, նշ. աշխ., էջ 11:

22 Բերդապարիսպ կառուցելու այս սկզբունքը նոյնական է Անիի Սմբատեան պարիսպների, Մաղասաբերդի ներքին պարսպի, Անբերդի դղեակի դիմաց կառուցուած պարիսպների համար:

պալատ-միջնաբերդ, որի չորս անկիւններում եւս եղել են կլոր աշտարակներ[23]*։*

Ներկայումս կիսաւեր վիճակում գտնւում է 1921 թուականին Թուրքիային անցած տարածքում։

Դ.- ՄԱՂԱՍԱԲԵՐԴ (ԾԱՌԱՔԱՐ)

Բերդ Շիրակի գաւառում[24]*, Անի քաղաքից չորս հազարամետր հարաւ։ Յաջորդաբար եղել է Կամսարական իշխանների պաշտպանական կառոյց, ապա՝ Բագրատունի, Զաքարեան թագաւորների ռազմական, պաշտպանական կարեւոր յենակէտ եւ Բագաւանի, - Շիրակաւանի, Կարսի, Տիգնիսի, հետ կազմել Անիի պաշտպանական համակարգի անենափոքր օղակը։ Հիմնուել է հնագոյն ժամանակներում։*

Մաղասաբերդը փոքր բերդ է, վեր է խոյանում Ախուրեան գետի երկու ոլորաններով օղակուած հատուածում։ Այն երեք կողմից շրջափակուած է Ախուրեան գետի ջրերով, խոր, անմատչելի անդունդով։ Պատմիչ Շապուհ Բագրատունին հաւաստել է, որ Զ. դարի վերջին բերդը կառուցել կամ վերակառուցել է Բիւզանդիայի Մօրիկ կայսեր (582-602) հայ կուսակալ Մաղաս իշխանը եւ կոչել իր անունով[25]*։*

Զաքարիա Քանաքեռցին այսպէս է նկարագրել բերդը։ «...ի Շիրակ գաւառի՝ մերձ ի յԱնի հարաւակողմն՝ ի վերայ Ախուրեան գետոյ՝ ի մէջ երկուց լերանց ի տափարակ տեղի, որ Գ. [երեք] կողմն բարձր բարափ էին, եւ յարեւմտեան կողմն փոքր ինչ դիւր եւ սակաւ ինչ զառ ի վայր»[26]*։ Թէեւ տարածքը երեք կողմից օղակուած է անդնդախոր ձորերով, այնուամենայնիւ այդ կողմերը եւս շրջափակուել են հզօր պարիսպներով։ Հիւսիս-արեւմուտքում ցամաքային կողմն ամրացուել է կրկնապարիսպով։ Առաջին պարիսպն*

23 Կառուցապատման նոյն կերպարն ունեն Կոշի դղեակը, Աստուածընկալի բերդի ներսի միջնաբերդը, Վարդենուտի բերդի ներսի երկյարկանի դըղեակը։

24 Հ. Ղ. Ալիշան, *Շիրակ*, նշ. աշխ., էջ 123։

25 *Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ*, հրտ. Գ. Տէր-Մկրտչեան - Մեսրոպ Եպիսկոպոս, Հրատարակութիւն էջմիածնի գիտական ինստիտուտի, էջմիածին 1921, էջ 4։

26 Զաքարիա Քանաքեռցի, *Պատմութիւն. Կոնդակ Սուրբ ուխտին Յոհաննու վանից*, աշխ. Ա. Վիրաբեան, Երեւան 2015, էջ 98-99։

ատամնաւոր է, դրան յաջորդող առաւել բարձր պարիսպն ամրապնդուած է չորս կիսակլոր աշտարակներով։ Մուտքը գտնւում է բերդի հիւսիս-արեւելեան հատուածում։ Բերդ տանող տարբեր ճանապարհներ են եղել։ Ներքին պարսպի դարպասի մօտից ստորգետնեայ գաղտնուղին քարաշէն սանդուղքով իջել է Ախուրեանի ափը։ Բերդի ներսում պահպանուել են քարաշէն տների, մատուռների, պալատի, բաղնիքի, քառակուսի յատակագծով մեծ ջրամբարի եւ այլ շինութիւնների աւերակներ։ Պարիսպները այժմ մեծ մասամբ կանգուն են։ Բերդի ճարտարապետական յօրինուածքը առանձնայատուկ է Ժ.-ԺԳ. դարերի ճարտարապետական մօտեցումներին։

2004-2005 թուականների պեղումների ընթացքում գետից 100 մետր բարձրութեան վրայ բացուել է քաղաքատեղի, որն անուանել են Հին Մաղասաբերդ, այն ունեցել է բարենպաստ դիրք, իսկ մուտքը՝ 3,5 մետր բացուածք[27]*։*

Ե.- ԲԱԳԱՐԱՆ

Բերդաքաղաք, որ գտնուել է Այրարատ նահանգի Արշարունիք (կամ Երասխաձոր) գաւառում, Ախուրեան եւ Արաքս գետերի միախառնման շրջանում, Ախուրեան գետի աջ ափին, Մրեն գիւղից հարաւ, պատմական Երուանդաշատ մայրաքաղաքից 8-9 հազարամետր հիւսիս։ Բերդաքաղաքը գտնուել է երեք կողմից Ախուրեան գետի անմատչելի կիրճով եզերուած, հիւսիսից հարաւ ձգուած երեք անմատոյց ժայռաբլուրների վրայ։ Քաղաքի դաշտակողմ հատուածում Ն.Ք. Բ. դարում Երուանդունիները, ապա՝ Կամսարականները պաշտպանական պատ են կառուցել։ Ը. դարի վերջին Արշարունիք ու Շիրակ գաւառների հետ Բագարանը եւս Կամսարականներից մասամբ դրամով, մասամբ արաբական էմիրին պարտութեան մատնելու միջոցով ձեռք է բերել Բագրատունի Աշոտ Մսակեր իշխանը։ Նրա կողմից դաշտակողմի պարիսպն առաւել ամրացուել է նոր, հզօր աշտարակներով։ Վերջինս Բագարանը դարձրել է իր աթոռանիստը։

Բագրատունի առաջին թագաւոր Աշոտ Ա.-ը (885-890) բերդաքաղաքը շատ կարճ ժամանակով՝ հինգ տարի, դարձրել է իր

27 Դանգիլը Ֆիլիպ, *Վերգտնուած Մաղասաբերդը*, «Վարձք», 2021, թիւ 16, էջ 47-55։

թագաւորութեան մայրաքաղաք։ Աշոտ Ա.-ին յաջորդած Սմբատ Ա.-ը (890-914) լքել է Բագարանը եւ աթոռանիստ-մայրաքաղաք դարձրել Շիրակաւանը (Երազգաւորս), որ գտնւում էր թագաւորութեան կենտրոնական շրջանում եւ ռազմավարական տեսակէտից աւելի անմատոյց դիրք ունէր։ Բագրատունիների թագաւորութեան ամբողջ ընթացքում, Զաքարեանների օրօք եւս, Բագարանի բերդը կարեւոր դերակատարութիւն է ունեցել նախ Շիրակաւանի եւ Կարս մայրաքաղաքների, ապա՝ Անի մայրաքաղաքի պաշտպանական համակարգում։

Բագարանում էր գտնւում Բագրատունիների, նրանց ընտանիքի անդամների տոհմական դամբարանը։ Այստեղ է թաղուած նաեւ Աշոտ Ա. թագաւորը։

1045 թուականին Անիի թագաւորութեան հետ միասին Բագարանը եւս նուաճուել է Բիւզանդիայի կողմից։ 1064 թուականին այն գրաւել են սելջուկ թուրքերը, ԺԲ. դարի սկզբներին՝ Շահարմէնները։

Հիւսիսային Հայաստանի հետ միասին 1199 թուականին Բագարանի բերդն ազատագրուել է Զաքարեանների կողմից։ 1236 թուականին բերդաքաղաքը մոնղոլ թաթարների կողմից նուաճուել, աւերուել ու անկում է ապրել։ 1394 թուականին Բագարանը գրաւել ու աւերել է Լէնկթեմուրը։

Զ.- ԴԱՇՏԱԴԷՄ

ԺԱ.-Ի. դարերի ամրոց Արագածոտնի մարզի Թալին քաղաքի մօտ գտնուող Դաշտադէմ գիւղի հարաւային եզրին։

Դաշտադէմի ամրոցը Հայաստանի ամրաշինական համակարգի եզակի համալիրներից է։ Առաջին թուակիր աղբիւրը միջնաբերդի հարաւ-արեւմտեան աշտարակի վրայ պահպանուած արաբերէն արձանագրութիւնն է, որի համաձայն՝ Սուլթան իբն Մահմուդ իբն Շաւուր շաղդադեանը 1174 թուականի Սեպտեմբերին հիմնել է շինութիւնը։ Երկրորդ առանցքային սկզբնաղբիւրը 1307 թուականի հայերէն արձանագրութիւնն է, որի համաձայն Աղբուղա Զաքարեանը Թալին գիւղն ազատել է գինու յարկից։

Զաքարեանների թագաւորութեան ժամանակաշրջանում եղել է Անի մայրաքաղաքի կարեւոր պաշտպանական կառոյցներից մէկը՝ գտնուելով Դուին-Անի ճանապարհի վրայ, վերահսկել է ճանապարհի անվտանգութիւնը։

Մոնղոլական արշաւանքների սկզբում, հայկական միւս պաշտպանական կառոյցների նման ամրոցն աւերուել է, սակայն ամենայն հաւանականութեամբ Զաքարեանները այն վերականգնել ու տիրել են։

Միջնադարեան ամրոցը բաղկացած է միջնաբերդից եւ շրջապարսպից, որոնց միջեւ ստեղծուած ներքին բակի տարբեր հատուածներում գտնւում են պալատական միանաւ եկեղեցին, աշխարհիկ շէնքերը, ստորգետնեայ ջրամբարը, տնտեսական նշանակութեան այլ կառոյցներ։

Համալիրի կենտրոնական կառոյցը բազմանիստ, կիսակլոր աշտարակներով միջնաբերդն է, որի գլխաւոր հիմքը ուղղանկիւն յատակագծով թաղակապ շինութիւնն է։ Միակ մուտքը հարաւային կողմում է, որ փակուել է քարէ դռնով։ Կառոյցի ներսում՝ հարաւ-արեւելեան պատի կենտրոնում տեղադրուած մուտքից սկսուող միջանցքը եւ նեղ ոլորապտոյտ աստիճանները տանում են միջնաբերդի աստիճանաձեւ տանիք։ Թաղակապ կառոյցի ներսում պահպանուել է գաղտնուղին։ Միջնաբերդի նիստաւոր եւ պայտաձեւ աշտարակներում տեղակայուել են բնակելի յարկաբաժիններ, որոնց մուտքերը բացւում են տանիքից, իսկ կիսակլորները ծառայել են պաշտպանական նպատակների։

Անկանոն բազմանկիւն յատակագծով շրջապարիսպը, տասնմէկ կիսակլոր աշտարակով եւ երկու դարպասով, ընդգրկում է 2500կմ տարածք։ Աշտարակների մի մասն ունի միկողմանի կամ երկկողմանի սանդուղքներ։ Ամրոցի գլխաւոր կամարակապ դարպասը հարաւային կողմում է։ Այն ներքուստ ունի փոքր թաղակապ սրահ։

ԺԳ.-ԺԴ. դարերին բնորոշ երկու աշխարհիկ շէնքերից մէկը քառասիւն, քառակուսի յատակագծով հանդիսաւոր դահլիճ է, որի միայն հիմնապատերն են պահպանուել։ Երկրորդ կառոյցը, որ կից է հարաւային շրջապարսպին, բազմաթիւ փոփոխութիւններ է կրել։ Այն երկարաձգուած ուղղանկիւն շէնք է, որ հաւանաբար եղել է սեղանատուն։

Խմելու ջրի համար կառուցուել է ջրամատակարարման համակարգ՝ ստորգետնեայ ջրամբարով՝ դղեակի հիւսիս-արեւելեան հատուածում։

Բազմանկիւն յատակագծով պարսպապատը կառուցուել է կոպտատաշ տեղական կարծր տուֆով, մասամբ բազալտով՝ կաւաբետոնի շաղախով։ Այն ուժեղացուած է եօթ սրածայր, քառանիստ

եւ մէկ կիսակլոր աշտարակով։ Ամրոցի գլխաւոր մուտքը հիւսիսից է։ Արտաքին պարսպապատն ունի գաղտնի միջանցք, որ դուրս է գալիս դէպի արեւմտեան կողմի ձորակը։

ԺԹ. դարի վերջին բերդը նկարագրել են Յովհաննէս եպիսկոպոս Շախաթունեանցը[28] *եւ ճարտարապետ Թորոս Թորամանեանը*[29]*։*

Դղեակում իրականացուած պեղումների արդիւնքում արձանագրուել են երեք մշակութային շերտեր՝ ԺԲ.-ԺԴ. դարերի, ԺԵ.-ԺԸ. դարերի՝ վերակառուցումների հետքերով եւ ԺԹ.-Ի. դարերի։

Համալիրի տարածքը ԺԹ. դարում կառուցուած տներից ազատուել է 2015 թուականին՝ ԱՄՆ դեսպանատան մշակութային արժէքների պահպանութեան հիմնադրամի հովանաւորութեամբ։

Է.- ԿԱՐԲԻԻ ԲԵՐԴ

Գտնւում է Արագածոտնի մարզի Աշտարակի տարածաշրջանում, Քասաղ գետի ձախ ափին, Կարբի գիւղի դիմաց, Քասաղի կիրճի անդնդախոր ձորի եւ ժայռային կտրուածքի առաջացրած եռանկիւնաձեւ տարածութեան վրայ։

Լինելով Անբերդի առաջապահը, միաժամանակ հանդիսացել է Անի մայրաքաղաքի պաշտպանական համակարգի մաս։ Տարածքի ընձեռած հնարաւորութիւնը լաւագոյնս է օգտագործուած։ Ինչպէս եւ Անբերդում, այստեղ եւս հարկ է եղել փակել միայն եռանկիւնաձեւ տարածութեան ընդհանուր հարթութեան հետ միացնող անպաշտպան հատուածը։

Բերդատարածքը համեմատաբար փոքր է։ Եռանկիւնու սուր ծայրին մնում են շինութիւնների հիմնային հատուածներ, որոնց ընդհանուր տեսքը թոյլ է տալիս եզրակացնելու, որ ծառայել են, որպէս մշտական կացարաններ։ Բերդի պաշտպանական պարիսպները հիմնովին աւերուած են։

Կարբիի այս հատուածը բերդի վերածելու նախաձեռնութիւնը Այրարատի կուսակալութեան կուսակալ, իշխանաց իշխան Վաչէ Ա. Վաչուտեանի եւ հօրը յաջորդած որդու, իշխանաց իշխան Քուրդ Ա. Վաչուտեանի ձեռնարկն է։ Պարիսպների կառուցումն

28 Յ. ՇԱԽԱԹՈՒՆԵԱՆՑ, *Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ*, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2014, էջ 242:

29 Թ. ԹՈՐԱՄԱՆԵԱՆ, *Նիւթեր հայկական ճարտարապետութեան պատմութեան*, հտ. Բ., ՀՍՍՌ ԳԱ հրտ., Երեւան 1948, էջ 130, 251–252:

աւարտուել է մոնղոլների յարձակման նախօրեակին, 1235 թուականին։ Բերդատարածքի կենտրոնական մասում Քուրդ Ա.-ի հրամանով խաչքարն է կանգնեցուել։ Խաչքարի պատուանդանին փորագրուած արձանագրութեամբ նա հաւաստել է, որ Վաչէ Ա. Վաչուտեանի մահից յետոյ, Շահնշահ Ա. Զաքարեանի հրամանով, ստանձնել է կուսակալութեան-փոխարքայութեան գահը, աւարտին է հասցրել Կարբիի բերդի կառուցումը, գահակալելու եւ բերդը կառուցելու առիթով զիջել է բնակչութեան «շարիատ»[30] *կոչուած յարկը։*

Քուրդ Ա.-ի գահակից որդիները, նախ Վաչէ Բ.-ը, ապա 1261 թուականին, նրա մահից յետոյ, փոխարքայութեան գահակից, ապա՝ գահակալներ Հասան եւ Դաւիթ Բ. իշխանները, Կարբիի բերդը վերածել են փոխարքայութեան մայրաքաղաքի։ Սկզբնապէս՝ 1290–1300ական թուականներին այստեղ է գործել նաեւ Քուրդ Բ. Անբերդեցին։ Քուրդ Բ.-ի անունն առաջին անգամ յիշուել է 1310 թուականին Յովհաննավանքում ընդօրինակուած Աւետարանի յիշատակարանում. «Ի թուականիս Հայոց ՉԾԹ. (1310)... յիշխանութեան մերոյ գաւառիս Քրդին, որդոյ Տայիրին, թոռն մեծին եւ բարեպաշտ Քրդին»[31]*։ Հնարաւոր է, որ մինչ այդ թուականը Քուրդ Բ.-ը եւս ապրել է Կարբիում։ Դրա վկայութիւնն է Կարբիում գտնուող հետեւեալ արձանագրութիւնը.* «Թ[ուին] ՉԿԳ. (1314): Ղանութեան Խարպանտին: Ես՝ Քուրդ Անբերդեցի իշխանաց իշխան եւ Խուանդ խաթունս նորոգեցաք զբերդս եւ բրջներս: Աստուած վաելել տա բազում»[32]*։ Արձանագրութիւնը յուշում է, որ Քուրդ Բ.-ը թէեւ հաստատուել էր Անբերդում, բայց երկրամասի պաշտպանութեան համար իրականացրել է Կարբիի բերդի ու բուրգերի նորոգումը։*

Ը.- ԱՍՏՈՒԱԾԸՆԿԱԼԻ ԲԵՐԴ

Գտնւում է Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի Աստուածընկալի վանական համալիրի դիմաց, Քասաղ գետի ձախ ափի, Երնջատափ գիւղից մէկ հազարամետր հիւսիս՝ երեք կողմից անմատչելի եռանկիւնաձեւ հարթութեան վրայ։

30 Տ. ՊԵՏՐՈՍԵԱՆՑ, *Վաչուտեաններ, Այրարատի կողմնակալութեան-փոխարքայութեան ռազմական-քաղաքական-տնտեսական-մշակութային պատմութիւն*, Երեւան 2023, էջ 270:

31 *ԺԴ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, կազմեց Լ. ԽԱՉԻԿԵԱՆ, Երեւան 1950, էջ 65-66:

32 Մեր հաւաքածոյից:

Ճակատային կողմից, որտեղ ելուստը միացած է դիմացի հարթութեան հետ, կառուցուած է եղել 84մ երկարութեամբ հզօր պարիսպ, որի հիմքի լայնութիւնը 2,3-3մ է։

Եռանկիւնաձեւ տարածութեան հիւսիսային կողմում կառուցուած է դղեակ, որի կողմերի երկարութիւնը համապատասխանաբար 40 եւ 42մ է, իսկ լայնութիւնը՝ 32 եւ 35մ։ Դղեակի չորս անկիւններում կառուցուած են կլոր աշտարակներ (ինչպէս Կոչի ամրոցում)։ Պարիսպների հաստութիւնը 1-1,5մ է։ Պատերի մէջ լցուած են մանր քարեր։ Դղեակի ներսում իւրաքանչիւր պատին կից կան 7-8 սենեակ յիշեցնող շինութիւններ։ Պահպանուել են դղեակի 1-1,4մ բարձրութեամբ պատերը։ Թշնամական յարձակումների դէպքում բերդում թաքնուել են վանքի միաբաններն ու շրջակայ գիւղերի բնակիչները[33]*։*

Թ.- ՎԱՐԴԵՆՈՒՏԻ ԲԵՐԴ

Գտնւում է Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի հարաւ-արեւմտեան կողմում, Արագած լեռան ստորոտին, Արայի լեռան դիմաց, Քասաղ գետ աջակողմում։

Միջնադարեան բերդը գտնուել է գիւղի հիւսիսային հատուածում։ Պահպանուել է մօտ 70 մետր երկարութեան պարսպապատ եւ դրա հարաւային ծայրամասում կլոր աշտարակի ներքին հատուածը։ Բերդի պարսպի միւս հատուածների քարերը գիւղացիներն օգտագործել են տների կառուցման, դրանք պարսպապատելու համար։ Պարսպաքարերը օգտագործուել են նաեւ բերդի տարածքում խորհրդային իշխանութեան տարիներին անասնապահական գոմերի կառուցման համար։ Պահպանուած պարիսպը կանոնաւոր շարուածք ունի։ Շարի համար օգտագործուել է տեղական հեշտ մշակուող կիսուած նաեւ անմշակ որձաքար։

Պահպանուած պարսպի գրեթէ կենտրոնական հատուածի ամենաբարձր կէտում կառուցուած է փոքր եկեղեցի։ Կառոյցի համար օգտագործուել է ապարանեան սեւ տուֆ։ Այն լաւ պահպանուել է, ունի երկթեք քարէ սալերով ծածկ։

Բերդի արեւմտեան ամենաբարձր հատուածում, տափարակի վրայ, մնում են քառակուսի յատակագծով, 11x11մ չափերի դղեակի

33 Տ. Պետրոսեանց, *Նիգ-Ապարանի պատմաճարտարապետական յուշարձանները*, ճշ. աշխ., էջ 25: Նոյն, *Վաչուտեաններ*, ճշ. աշխ., էջ 274:

հիմնային հատուածը։ Դղեակի բոլոր չորս անկիւններում եղել են կլոր աշտարակներ՝ նման Կոչի դղեակին, Աստուածընկալի բերդ ներսում գտնուող դղեակին։ Կառուցուած է տեղական որձաքարի լաւ մշակուած քարերով։ Կենտրոնում երկու հզօր սիւներ, 1,5x1,5մ յատակագծով, կրել են երկրորդ յարկը։ Դղեակի երկյարկ կանգուն պատերը 1830ական թուականներին տեսել եւ նկարագրել է Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանցը[34]*։ Գիւղացիները դղեակն աւերել են ու քարերն օգտագործել շինարարական նպատակներով ինչպէս բերդապարսպի քարերը։ Դղեակի որոշ մշակուած շարաքարեր, շքամուտքի ձեւաւոր քարեր, անգամ բարաւորի քարեր դարձրել են դղեակի եւ փոքր եկեղեցու միջնամասում հիմնած գերեզմանոցում*[35]*։*

Ժ.- ՃԵՐՄԱԿ ՎԱՆՔԻ ԲԵՐԴ-ԱՄՐՈՑ

Գտնւում է Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի պատմական Ճերմակ վանք գիւղի տարածքում, Քուչակ գիւղից մօտ 2կմ արեւմուտք, Արագածի ստորոտի աղբիւրների ակունքի մօտ։

Աղբիւրներից վեր, արեւմտեան եւ հարաւային կողմից դժուարամատչելի բարձրութեան եռանկիւնաձեւ տարածքում կառուցուած է բաւական ամուր, իրար մէջ բացուող դռներով ամրոց։ Տեղում՝ 1-1,3մ բարձրութեամբ, երեւում են 10 մեծ ու փոքր շինութիւնների հիմքեր։ Արտաքին պատերի հաստութիւնը 1,8-2,7մ է։ Պատերը շարուած են միջին մեծութեան անմշակ որձաքարով, շարուածքի մէջ լցուած են մանր քարեր։ Թէ ամրոցում, թէ շրջապատում թափուած են միջնադարեան խեցեղէնի կտորներ[36]*։*

ԺԱ.- ԿՈՇԻ ԲԵՐԴ-ԱՄՐՈՑ

Այրարատի կուսակալութեան-փոխարքայութեան տարածքում, Անբերդից մօտ տաս կիլոմետր հարաւ-արեւմուտք, պատ-

34 Յ. Շահխաթունեանց, *Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ*, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին 2014, էջ 320:

35 Տ. Պետրոսեանց, *Նիգ* Նիգ-Ապարանի պատմաճարտարապետական յուշարձանները, ճշ. աշխ., էջ 54-55:

36 Տ. Պետրոսեանց, *Նիգ-Ապարանի պատմաճարտարապետական յուշարձանները*, ճշ. աշխ., էջ 59: Նոյնի՝ *Վաչուտեաններ*, ճշ. աշխ., էջ 276:

մական եւ ներկայիս Կոչ գիւղի հիւսիսային կողմում, բլրի գագաթի հատուածում, հնագոյն բերդատարածքի արեւմտեան մասում, ի պատիւ թուրք-սելջուկներից Անբերդի ազատագրման, կառուցուել է Անբերդը այդ կողմից պաշտպանող փոքր չափի բերդ։

Այն թէ չափերով, թէ կառուցման նկարագրով նման է Աստուածընկալի դիմաց գտնուող բերդի միջնաբերդին։ Տարբերութիւններ, ի հարկէ կան։ Աստուածընկալի միջնաբերդը կառուցուած է բազալտի կոպտատաշ, անհաւասարաչափ քարերով, ներսատարածքի բոլոր պատերին կից առկայ են աւերուած կացարանների հետքեր։ Կոչի բերդատարածքում կից կառոյցների հետքեր չեն պահպանուել։

Կոչի բերդը եւս Աստուածընկալի միջնաբերդի, Վարդենուտի եռակի անգամ փոքր միջնաբերդ-դղեակի նման ուղղանկիւն յատակագծային յօրինուածք ունի։ Կառուցուած է մաքուր տաշած տուֆի խոշոր քարերով, բերդի ստորին, հիմնային հատուածը՝ կոպտատաշ բազալտով։ Ուղղանկիւն կառոյցի բոլոր չորս անկիւնները կիսակլոր, սնամէջ աշտարակներով են սահմանափակուել։ Մուտքերը հիւսիսից (այժմ աւերուած) եւ հարաւից են՝ ներսից կից թաղակապ սրահ-անցումով։

ԺԲ.- ԱՆԲԵՐԴ

Դեռեւս Բագրատունիների շրջանում ձեւաւորուած ու Պահլաւունիների կողմից կառուցապատուած Անբերդ ամրոցը Զաքարեանների ենթակայ Այրարատի կողմնակալութեան գահակալ Վաչուտեանների օրօք վերակառուցուել, ամրացուել, դարձել է Հայկական լեռնաշխարհի հզօր ամրութիւններից մէկը եւ Անի մայրաքաղաքի հարաւային ուղղութեան պաշտպանական համակարգի դարպասը[37]։

Գտնուելով ծովի մակերեւոյթից 2000-2300 մետր բարձրութեան վրայ, Արքաշէն եւ Անբերդ գետակների առաջացրած անկանոն եռանկիւնու վրայ, բնականից ունենալով անառիկ դիրք, Անբերդը ծառայել է որպէս բերդաքաղաք-ամրոց։

Անբերդ գետի կողմից ձորալանջը եզերուած է գահավէժ ձորով, որոշ տեղերում ժայռի բարձրութիւնը հասնում է մինչեւ

37 Անբերդի մասին մանրամասն տե՛ս Տ. ՊԵՏՐՈՍԵԱՆՑ, *Անբերդի ամրոցը*, «ՀՀ ՊՆ Հայկական բանակ հանդէս», 2018, թիւ 1-2, էջ 246-253:

50 մետրի եւ անմատչելի է։ Այս կողմում պաշտպանական պարիսպներ են կառուցուած միայն դղեակի մօտ եւ հրուանդանի սուր ծայրին։ Արքաշէն գետին նայող լանջերը թէեւ մեծ թեքութիւն ունեն, սակայն զուրկ են բնական անմատչելիութիւնից եւ տեղանքի առանձնայատկութիւններից ելնելով, այս կողմում կառուցուել են պարիսպներ, իսկ առաւել անապահով կէտերում դրանք ուժեղացուել են աշտարակներով։ Հրուանդանի սուր ծայրից՝ գետերի ջրաբաժան գծին ուղղահայեաց, շուրջ 800 մետր դէպի հիւսիս, եռանկիւնու հիմնային հատուածում տեղադրուել է Վաչուտեանների կողմից ԺԳ. դարի 10ական թուականներին հիմնովին վերակառուցուած եռայարկ պալատ-դղեակը, որը հիւսիսային կողմից նոր ամրակուռ պարսպով պաշտպանուել է, իսկ ԺԴ. դարի սկզբին հարաւային կողմում կառուցուած պարսպի շնորհիւ վերածուել է միջնաբերդի։

Ամրոցն ունեցել է երկու մուտք՝ Անբերդի եւ Արքաշէնի ձորերի կողմից։

Պահլաւունիները են ընտրել Անբերդ բերդաքաղաքի տեղը եւ կառուցել բերդը։ Յայտնի չէ, թէ ինչ տեսք են ունեցել Պահլաւունիների կառուցած դղեակն ու պարիսպները, բայց այն, ինչ այժմ պահպանուել է Անբերդում, բացի Վահրամաշէն եկեղեցուց, որոշ տեղերում պեղումներով բացուած հին պարսպի մասերից, կանգուն ու կիսաւեր շինութիւնները կառուցուել են Վաչուտեանների կողմից՝ իրենց ճաշակի եւ ժամանակի ռազմավարական բոլոր պահանջներին համապատասխան։

Առաջին ժամանակահատուածում Վաչէ Ա. Վաչուտեան իշխանաց իշխանը, մինչեւ 1220, ամենաուշը 1225 թուականը, մինչեւ Խորեզմշահ Ջալալ ադ-Դինի ասպատակութիւններն ու այնուհետեւ մոնղոլ-թաթարների յարձակումը, ամբողջովին աւարտել է նոր, եռայարկ պալատ-դղեակի, հիւսիսային արտաքին բրգաւոր պարսպի, Անբերդաձորի եւ Արքաշէնի նոր դարպասների, Արքաշէն իջնող նոր պարսպապատի, Արքաշէն գետի կողմնային մօտ 800մ երկարութեան պարսպապատի շինարարութիւնը։

Երկրորդ ժամանակահատուածում՝ 1250-1260ական թուականներին Քուրդ Ա. Վաչուտեանը վերակառուցել-ամրացրել է մոնղոլների կողմից աւերած բերդաքաղաքը։

Երրորդ ժամանակաշրջանում կառուցուել է Արքաշէնի դարպասից սկսուող եւ պալատ-դղեակի հարաւակողմում կառուցուած բրգաւոր պարսպը հասնող նոր պարսպապատը։ Դրանով պալատ-

դղեակը կտրուել է ամրոցաներսի տարածութիւնից եւ վերածուել է միջնաբերդի։

Մոնղոլական աւերածութիւնները որքան էլ ծանր են եղել, Քուրդ Ա. իշխանաց իշխանը, նրա թոռ Քուրդ Բ. իշխանաց իշխանը դրանք վերացրել են։

Անբերդը գրաւուել, հիմնովին աւերուել ու հրդեհուել է ԺԴ. դարի կէսերին, 1350ական թուականների վերջին, Լենկ-Թիմուրի արշաւանքների ժամանակ։ Եւ այդ վիճակով հասել մեր օրերը։

Քաղաքն ունեցել է մշտական ջուր, որ կաւէ խողովակներով քաղաք է բերուել 3-4 կիլոմետր հեռաւորութիւնից, ունեցել է բաւական ընդարձակ գաղտնուղի դէպի Անբերդ գետակը՝ ջուր վերցնելու համար։ Ինչպէս դղեակի ներսում, այնպէս էլ դրանից դուրս եղել են ջրի պահպանման ամբարներ։ Քաղաքն ունեցել է այդ ժամանակների համար առաջնակարգ բաղնիք, որտեղ ջրամատակարարումն ապահովուել է մետաղէ խողովակներով, որոնց ծայրերին եղել են պղնձէ ծորակներ։

Բերդաքաղաքի ներսում տեսանելի են կացարանների բազմաթիւ հանգոյցներ, ինչը ենթադրել է տալիս, որ այն ունեցել է բաւականին հոծ հիմնական բնակչութիւն։

Բերդի կողային ձորերում առկայ են քարայրներ, որոնք նոյնպէս ծառայել են որպէս բնակարաններ։ Դրանք լինելով բնական բացուածքներ մարդու ձեռքով լայնացուել, մեծացուել են, կազմուել կից սենեակներից, ունեցել են քարէ մեծ ու դժուար յաղթահարելի դռներ։ Ներսում առկայ են թոնիրներ եւ կրակի օջախի տեղեր։ Ունեցել են ծխնելոյզներ։

Բերդաքաղաքից դուրս, դէպի Արագածի ստորոտի խորքը եւ Արքաշէնի հակառակ ափին գտնւում են երկու մեծ գերեզմանատներ, որտեղ բազմաթիւ թաղումներ են կատարուել, պահպանուել են սովորական ու որմնափակ խաչքարեր, մատուռների մնացորդներ, բազմաձեւ տապանաքարեր։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Անի քաղաքը հայկական երկու թագաւորութիւնների՝ Բագրատունիների (961-1045) եւ Զաքարեանների (1199-1236) մայրաքաղաք է եղել 131 տարի։ Երկու թագաւորութիւններն էլ իւրովի են լուծել մայրաքաղաքի պաշտպանութեան հիմնահարցը։

Բագրատունիներն անմիջապէս Հայաստանի պետութեան սահմանային առաջին օղակը ամրապնդել են արեւելքից արեւմուտք ուղղութեամբ Գուգարքի Գագ, Աղջկայ բերդ, Գաւարզին, Գարդման, Թանիկ, Մածնաբերդ, Մանթաշ-Կայծոն, Արցախի Գիւլիստան, Բերդաքար, Ջրաբերդ, Հաւքախաղաց, Խոխանաբերդ, Շիկաքար, Աղջկաբերդ, Գոռոզ, Խցաբերդ, Ցոր, Սիւնիքի Անդոկաբերդ, Բարկուշատ, Պահու, Քաշունի, Քարոտան, Բերդիկ, Պահու, Կկուաքար, Բղենոյ, Կարճաւան, Կաքաւաբերդ, Գիլաբերդ, Բաղաբերդ, Շլորուտ, Եզնաքար, Որձաբերդ, Որոտան, Ցուրաբերդ, Խոժոռաբերդ, Ձագէձոր, Հալիձոր, Հայրաբերդ, Գողթնի Գիրան, Որդուարի, Շահկերտ, Ազնզբերդ, Շահապոնք, Ջուղա, Երնջակ, Ճահուկ, Նախիջեւան, Արբայ, Կոգովիտի Արտագերս (Կապոյտ բերդ), Դարոյնք, Արշարունիքի Սուրբ Մարի, Ջաւախքի Ախալքալակ, Խիռտուիս, Թմբկաբերդ, Ախալցխա, Ածղոր հզօր բերդերի համակարգով։ Պաշտպանութեան համակարգի մաս են կազմել նաեւ Վիրքի հետ սահմանի (շրջանագծի տրամագծի) Գուգարաց նահանգի Լոռի գաւառի Շամշուլդէ, Լոռեբերդ, Սեղուի, Կայծոն, Պղնձահանք, Ջախալաբերդ, Խոժոռնի, Բերդաւան, Տաշիր-Ձորագետ գաւառի Կայան, Ոտիքի Տաւուշ բերդերը, եթէ յանկարծ - Վիրքի կողմից լինէր յարձակումը։

Արտաքին այս օղակին յաջորդել են ներքին նուազագոյնը երկու օղակ։

Դրանցից առաջինում կարեւոր դերակատարութիւն են ունեցել Վայոց Ձոր գաւառի Սմբատաբերդ, Բոլորաբերդ, Հրաշկաբերդ, Այրարատի Ուրծ, Տափ, Դուին, Երեւանի, Բջնի, Գառնի, Շիրակի Հառիճ բերդ-ամրոցները։

Երրորդ օղակը պայմանականօրէն կազմել են անմիջապէս մայրաքաղաքը պաշտպանող համակարգի բերդերը՝ հիւսիս-արեւմուտքից Կարսը, Երազգաւորսը, Տիգնիսը, հարաւ-արեւելքից Մաղասաբերդը, Բագարանը, Դաշտադէմը, Անբերդը, միւսները։

Զաքարեանները, որ 1185 թուականին անկախութեան կարգավիճակ են ստացել Վիրքի թագաւորութիւնից, նրա հետ որպէս անկախ պետութիւն միասնական անվտանգութեան համակարգ են ձեւաւորել եւ այլեւս շրջանաձեւ պաշտպանութեան մէկ բաղադրիչի՝ ամբողջ շրջանի պաշտպանութեան համակարգի պատասխանատուութիւն չեն ունեցել։ Զաքարեանները Հայաստան-Հայքի եւ Վիրքի միջեւ ձեւաւորուած վերպետական դաշինքով ստանձնել են շրջանաձեւ պաշտպանութեան միայն կէս շրջանի պատասխա-

նատուութիւնը։ Թերեւս խօսքը գնում է Ախալքալակի, Կայէնի, Պղնձահանքի, Լոռէ բերդի գործառոյթների դադարեցման կամ ոչ ամբողջ գործառոյթ իրականացնելու մասին։ Հայաստան-Հայքի կիսաշրջան տարածքի անվտանգութիւնն ու պաշտպանութիւնը շարունակուել է իրականացուել Բագրատունիների օրօք ձեւաւորուած բերդ-ամրոցների համակարգով։

ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆՑ
ՀՐԱՉԵԱՅ ՊԵՏՐՈՍԵԱՆՑ

Summary

CENTRAL PROTECTION SYSTEM OF THE CAPITAL ANI

TIGRAN PETROSYANTS – HRACHYA PETROSYANTS

The city of Ani was the capital of two Armenian kingdoms, Bagratunis (961-1045) and Zakaryans (1199-1236), for 131 years. Both kingdoms solved the problem of protecting the capital in their own way.

The Bagratunis immediately strengthened the first border ring of the Armenian state from east to west Gugarki Gag, Aghjka fortress, Gavarzin, Gardman, Tanik, Matznaberd, Mantash-Kayton, Artsakh Gulistan, Berdakar, Jraberd, Havkaparats, Khokhanabert, Shikakar, Goroz, Khtsaberd, Tsor, Syunik Andokaberd, Barkushat, Pahu, Kashuni, Karotan, Berdik, Kkuakar, Bgheno, Karchavan, Kakavaberd, Gilaberd, Baghaberd, Shlorut, Yeznakar, Ordzaberd, Vorotan, Tsuraberd, Khozhoraberd, Dzagedzor, Halidzor, Hayraberd, Goghtni Gira, Orduari, Shahkert, Aznzberd, Shahaponk, Jugha, Yernjak, Zahuk, Nakhijevan, Arba, , Kogoviti Artagers (Blue Fort), Daroynk, Arsharunik, Saint Mary, Javakhki Akhalkalak, Khirtvis, Tmbkaberd, Akhaltskha, Aghor with a system of powerful fortresses.

Shamshulde, Loreberd, Sedvi, Kayton, Pghndzahank, Chakhalaberd, Khozhorni, Berdavan, Kayan, Tashir-Dzoraget province, Otik Tavush fortresses of Lori province, Gugarats province, on the border with Virk (circle diameter), were also part of the defense system, in case of an attack by Virk.

This outer ring was followed by at least two inner rings.

The first of them played an important role in Vayots Dzor province Smbataberd, Boloraberd, Hrashkaberd, Airarat Urts, Tap, Dvin, Yerevan, Bjni, Garni, Shirak Harich fortresses.

The third ring was conventionally made up of the fortresses of the system directly protecting the capital: Kars, Erzagavors, Tignis from the northwest, Maghasaberd, Bagaran, Dashtadem, Anberd, and others from the southeast. The Zakarians, who gained independence from the kingdom of Virk in 1185, formed a unified security system with it as an independent state and no longer had the responsibility of one component of the circular defense, the defense system of the

entire region. The Zakaryans assumed the responsibility of only half of the circular defense with the supranational alliance formed between Armenia-Hayk and Virk. Perhaps we are talking about stopping the functions of Akhalkalak, Kayen, Pngdzahank, Lori fortress or not performing their full function. The security and protection of the Armenia-Hayk semi-circle will continue to be implemented by the system of fortresses formed during the reign of the Bagratunis.

ՅՈՅՆ ՊԱՏՄԱԳԻՐ ՊՈՂԻԻԲԻՈՍԸ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՔՆՆԱԿԱՆ ԵՒ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՄՕՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՍԿԶԲՆԱՒՈՐՈՂ

Պատմութեան տեսութեան ու մեթոդաբանութեան հարցերի ուսումնասիրութեան ու լուսաբանման գործընթացն սկսուել է հնագոյն շրջանում՝ Հին Յունաստանում եւ Հին Հռոմում։

Այդ երկրների գիտութեան եւ մշակոյթի մեծերն իրենց մըտաւոր կառոյցով, նորարարական գաղափարներով, պատկերացումներով ու հոգեւոր բարձրարժէք յուշարձաններով դրեցին Արեւմուտքի ժամանակակից քաղաքակրթութեան հիմքերը։ Այդ համատեքստում պատմագրութեան գիտական մեթոդի ու մեթոդաբանութեան որոնումները յետագայում զարգացում են ապրել Եւրոպայում, բայց իրենց վերջնական կերպարանքն են ստացել միայն ԺԹ. դարում։

Պատմագիտութեան սկզբնաւորողներն են հանդիսանում յոյն պատմագիրներ Հերոդոտոսը (Herodotus), *Քսենոփոնը* (Xenophon), *Թուկիդիդէսը* (Thucydides), *Պողիւբիոսը* (Polybius), *Պլուտարքոսը* (Plutarchus), *Տակիտոսը* (Tacitus) *եւ ուրիշներ։ Բայց դրանց շարքում պատմութեան հանդէպ քննական ու վերլուծական մօտեցումների տեսակէտից առանձնանում է Թուկիդիդէսի մտքերի ու գաղափարների ժառանգորդ ու նոր որակի հասցնող, յոյն ականաւոր պատմաբան Պողիւբիոսը (Ք.ա. մօտ 200–118), որի պատմագիտական հայեացքների եւ մեթոդաբանական մօտեցումների վերհանմանն էլ նուիրուած է սոյն հրապարակումը։ Յատկանշական է, որ ռուս պատմաբան Վլ. Դեակովը* (В. А. Дьяков) *Թուկիդիդէսին ներկայացնում է իբրեւ հնագոյն պատմական մտքի գագաթ, իսկ*